

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի գործունեության 2021 թվականի առաջին կիսամյակի արդյունքների վերաբերյալ

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2021 թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզպետի կողմից ընդունվել է 87 որոշում: Հաշվետու ժամանակաշրջանում աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել է 4914 և ելք է արվել 4103 փաստաթուղթ:

2021 թվականին առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության *Նախագահի ու վարչապետի աշխատակազմից, ինչպես նաև հանրապետական գործադիր իշխանության մյուս մարմիններից ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 31 դիմումներ:*

*Քաղաքացիներից ստացվել է 633 դիմում, որոնցից*

**ա/** Դրամական օգնություն է խնդրել **444** քաղաքացի: 347 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 35-ինը մերժվել է՝ վեց ամսվա ընթացքում երկու անգամ դիմելու հիմքով, ևս 62 քաղաքացու տրվել է պարենային օգնություն:

**բ/** Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է **42** քաղաքացի, բոլոր 42 դիմումներին պատասխան է տրվել:

**գ/** Առողջապահական բնույթի **4** դիմում է ստացվել, որոնց նույնպես դրական ընթացք է տրվել:

**դ/** Աշխատանքի հարցով դիմել է **10** քաղաքացի, բոլորի պահանջին դրական ընթացք է տրվել:

**ե/** Գյուղատնտեսական հարցերով դիմել է **10** քաղաքացի, բոլորի խնդրանքը բավարարվել է:

**զ/** Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է **3** քաղաքացի, բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

**է/** հողաշինության հարցերով դիմած **9** քաղաքացիներին էլ տրվել է դրական պատասխան:

**ը/** Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է **22** քաղաքացի և ստացել դրական պատասխան:

**թ/** Ստացվել է այլ բնույթի **90** դիմում:

Մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցելու համար ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից 387 քաղաքացիների տրամադրվել է դրամական օգնություն: Նույն՝ <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով, երեք միլիոն դրամ միանվագ դրամական օգնություն է հատկացվել մարզի սոցիալապես անապահով 6 բնակիչների՝ հրատապ և անհետաձգելի կարիքները լուծելու նպատակով:

2021 թ. առաջին կիսամյակի ընթացքում մշտապես ուշադրության կենտրոնում եղել են մարզային ենթակայության առողջապահական կազմակերպությունների, կրթական և մշակութային հաստատությունների գործունեությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իմ և մարզպետարանի աշխատակիցների կողմից այցելություններ են կատարվել մարզի համայնքներ, որոնց ընթացքում ի թիվս համայնքային հարցերի, քննարկումներ են եղել նաև համավարակի և Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով առաջացած առողջապահական ու սոցիալական խնդիրները մեղմելու կամ չեզոքացնելու նպատակով:

Համագործակցային հարաբերություններ են եղել ՀՀ ՊՆ 4-րդ բանակային կորպուսի հրամանատարության հետ և համակարգվել են ՀՀ ԳՄ Վայոց ձորի տարածքային ծառայությունների գործունեությունը:

Համակարգվել և կազմակերպվել է 2020 թ. ձմեռային և 2021 թ. ամառային գորակոչը:

2021 թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզ աշխատանքային այցեր են ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարար Ռոմանոս Պետրոսյանը, ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է ՀՀ կառավարության նիստերին և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում մարզպետների մասնակցությամբ կայացած խորհրդակցությանը:

### **Աշխատանքային հաղիպումներ այլ երկրների ներկայացուցիչների հետ**

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում աշխատանքային հանդիպումներ են եղել Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի, ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Մասանորի Ֆուկուշիմայի, <Դոմ Մոսկվի> մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանի, Հայ-ֆրանսիական մշակութային միության նախագահ Ալեքսան Կարապետյանի հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

## **Գյուղատնտեսության ոլորտում 2021 թվականի առաջին կիսամյակում գրանցված արդյունքները**

2021 թվականին մարզում կատարվել են գարնանացան ցանքեր, ընդամենը՝ 3537հա, որից՝ հացահատիկ և հատիկաբերողներ-1569 հա, բանջարեղենային մշակաբույսեր-272 հա, կարտոֆիլ-107 հա, կերային մշակաբույսեր-1552 հա, տեխնիկական մշակաբույսեր-16 հա:

ՀՀ կառավարության կողմից գարնանացան սերմացուների սուբսիդավորման ծրագրով մարզ է ներկրվել

- 36.1տ գարնանացան ցորենի սերմացու, կատարվել է 119.6հա ցանք,
- 86.5 տոննա գարնանացան գարու սերմացու, ցանքը՝ 426.8հա
- 14 տ կորնգանի սերմացու, ցանքը՝ 93.3հա:

**2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա անասնազվաքանակը.**  
Առկա է՝

- խոշոր եղջերավոր կենդանիներ՝ 21.125 գլուխ, որից կովեր՝ 8618 գլուխ,
- մանր եղջերավոր կենդանիներ՝ 15.601 գլուխ,
- խոզեր՝ 3.146 գլուխ,
- մեղվաբնասանիքներ՝ 24.077 փեթակ:

**2021թ. առաջին կիսամյակի ընթացքում պետական պատվերով մարզում իրականացված անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումների քանակը.**

Բրուցելյոզի ախտորոշման նպատակով ստուգվել են,

- խոշոր եղջերավոր կենդանիներ-9289գլուխ, որից 25-ի մոտ դրական արդյունք է եղել,
- մանր եղջերավոր կենդանիներ -4989 գլուխ, որից 33-ը դրական արդյունքով:

Կանխարգելիչ նպատակով պատվաստվել են՝

- դաբաղի նկատմամբ՝ 20.706 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ,
- սիբիրախտի նկատմամբ՝ 23.265 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների և 551 գլուխ ձիեր,
- էմկարի նկատմամբ՝ 15.297 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ,
- լեյկոզի հայտնաբերման համար՝ դարձյալ 165 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ:

ՀՀ Կառավարության կողմից գյուղատնտեսության զարգացումը խթանելուն ուղղված կարևորագույն քայլերից մեկը համարվում է «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի» կիրառումը, որի շրջանակներում 2021 թ. առաջին կիսամյակի ընթացքում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել է 14 պայմանագիր:

Մարզում գործող գյուղացիական տնտեսությունների, թվով՝ 321 շահառուի, Ֆարմ Կրեդիտ, Կամուրջ ՈԻՎԿ, Ակրա Կրեդիտ Ագրիկոլ բանկերի կողմից տրամադրվել են վարկեր, որոնց ընդհանուր գումարը կազմում է 633 մլն դրամ:

Վայոց ձորի մարզում ոռոգման ջրի անխափան մատակարարումն ապահովելու նպատակով մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը ամենօրյա համագործակցային աշխատանք է իրականացնում մարզը սպասարկող <<Եղեգնաձոր>> ՋՕ ընկերության հետ, որի կողմից հաշվետու ժամանակահատվածում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 4.500.000մ<sup>3</sup> ոռոգման ջուր, հասույթը՝ կազմել է 49, 5 մլն դրամ:

### **Հեռագնա արոտավայրերի արդյունավետ և նպատակային օգտագործում**

Մարզում առկա է 92.204 հա արոտավայր, որից օգտագործվում է 28.316 հա (մոտ 30%): 2021թ ամառվա ընթացքում Արարատի և Արմավիրի մարզերից Եղեգիս և Ջերմուկ համայնքների ամառային արոտավայրեր են բերվել մոտ 18.000 գլուխ մանր և 5.000 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ:

**Բույսերի պաշտպանության ծրագրով** մարզին անվճար տրամադրվել է 24.81 <<ԲրոմաԼԱԴ>> տեսակի մկնասպան թունանյութ՝ 310 հա համար:

Նշեմ, որ մարզի բնակչությանը մեծ վնաս են հասցնում վայրի գիշատիչ կենդանիները: Արձանագրվել է մասնավորապես արջի կողմից մարզի Զառիթափ, Եղեգիս, Արենի, Գլաձոր համայնքների բնակչությանը հասցրած վնասը, որը կազմում է մոտ. 3 մլն դրամ:

2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում մարզի գյուղատնտեսությունը մեծ վնաս է կրել կարկտահարությունից: Մայիսի 1-ին, 3-ին և 9-ին մարզի մի շարք բնակավայրերում տեղացած կարկուտի հետևանքով վնասվել է 202 հա պտղատու այգի և 23հա կերային մշակաբույսեր: Վնասի չափը կազմում է մոտ 400մլն դրամ: Հետագայում կարկտահարության վնասները մեղմելու համար ՀՀ կառավարության կողմից որոշվել է մարզի տարածքում տեղադրել ևս 32 նոր հակակարկտային կայանքներ, որի իրականացման նպատակով կառավարությունը մարզին հատկացրել է 60.8մլն դրամ գումար:

ՀՀ կառավարության կողմից, Գետափ-Եղեգնաձոր-Գլաձոր-Վերնաշեն ոռոգելի ջրագծի վթարային հենասյունների վերանորոգման համար մարզին տրամադրվելիք 24.2 մլն. դրամ գումարն արդյունավետ օգտագործելու նպատակով, ծախսերի գնահատման վերաբերյալ կատարվել են ուսումնասիրություններ:

Կազմակերպվել է <<Արաքս>> թոչնաֆաբրիկայի կողմից արցախյան պատերազմում զոհված, վիրավորված և անհետ կորած զինծառայողների ընտանիքներին բարեգործական հիմունքներով տրամադրված շուրջ 14.200թն մեկ օրական ճտերի հասցեական բաշխումը:

## **Բնապահպանության ոլորտ**

Հաշվետու ժամանակահատվածում հանրային լսումներ են կազմակերպվել Արենի համայնքի Խաչիկ և Գնիշիկ բնակավայրերում քվարցիտային հանքավայրերի շահագործման և Գնիշիկ բնակավայրի քվարցիտների հանքավայր <Ջրաձոր> տեղամասի հանքարդյունահանման աշխատանքների վերաբերյալ:

<ՇՄԱԳ>-ի (Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման) քննարկում է կազմակերպվել <Վայք Գոլդ> ՍՊԸ-ի Ազատեկի ոսկու բազմամետաղային հանքավայրի ստորգետնյա եղանակով արդյունահանման աշխատանքների վերաբերյալ:

Իսկ Խաչիկ բնակավայրում նախնական ուսումնասիրություն կատարելու թույլատվություն է տրվել <Յուլի Դալի> ՍՊԸ-ին:

Ուսումնասիրվել է Եղեգիս համայնքի Հորս բնակավայրում կառուցվող ՓՀԷԿ-ի գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ըստ նախնական եզրակացության՝ ՓՀԷԿ-ի գործարկումը խիստ բացասաբար է ազդում շրջակա միջավայրի վրա:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում քննարկվել է մարզի Եղեգիս գետի վրա կառուցված տասնմեկ ՀԷԿ-երի գործունեության ուսումնասիրությունը՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման <ՇՄԱԳ> (Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման) տեսանկյունից:

## **Քաղաքաշինության ոլորտ**

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հանձնարարականի համաձայն՝ ավարտին է հասցվել մարզի պետական սեփականություն համարվող անշարժ գույքի 236 օբյեկտների գույքագրման, տեղեկությունների հավաքագրման և ազատ տարածքների արդյունավետ օգտագործման առաջարկությունների ներկայացման գործընթացը:

Ավարտին է հասցվել նաև <Պարենի համաշխարհային ծրագրով> իրականացվող դպրոցների ճաշարանների նորոգման փաստաթղթերի օրինականության և քաղաքաշինական նորմերին համապատասխանության սվյալների ուսումնասիրությունը:

Քաղաքաշինության ոլորտի զարգացման ծրագրերի կատարման հետ կապված մշտապես համագործակցային աշխատանքներ են տարվում մարզպետարանի քաղաքաշինության վարչության, զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծությունների բաժնի, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան վարչությունների միջև:

2020 թվականին իրականացվելիք սուբվենցիոն ծրագրով կատարվող աշխատանքները սահմանված ժամկետում չավարտելու պատճառով 2021թ են փոխանցվել հետևյալ ծրագրեր.

1. Ջերմուկի արևային ֆոտովոլտային կայանի կառուցումը,
2. Գնդեվազի մանկապարտեզի հիմնանորոգումը,
3. Հերմոնի ռոռզման ջրագծի կառուցումը,
4. Եղեգնաձորի Նոր Ավան թաղամասի, ինչպես նաև Բաղրամյան, Աթարբեկյան և Կամո փողոցների լուսավորության ցանցի կառուցում: Օբյեկտների աշխատանքներն առաջին կիսամյակի ընթացքում ավարտվել, ընդունվել են հանձնաժողովի կողմից և հանձնվել շահագործման:
5. Ջերմուկ քաղաքի մանկական զարգացման կենտրոնի վերակառուցման աշխատանքներն ավարտվել են: Ենթակա է հանձնաժողովի կողմից ընդունման:
6. Զառիթափ համայնքի Մարտիրոս, Բարձրունի և Մարավան բնակավայրերի խմելու ջրագծերի և գլխամասային կառույցների աշխատանքները համարվում են ավարտված, սակայն գտնվում են հանձնաժողովի կողմից վեր հանված թերությունների և նախագծային շեղումների շտկման փուլում:
7. Շատինի մանկապարտեզի վերակառուցման ընթացքը դադարեցված է շինաշխատանքների ընթացքում ծագած տեխնիկական խնդիրների պատճառով:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ, Ասիական բանկի կողմից տրամադրված վարկային միջոցներով <Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրով> 2019 թ-ից իրականացվում է Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 դպրոցի շինարարությունը 1.169 մլն. դրամ արժեքով: Նշված կառույցում 2019թ-ին կատարվել է 86.4 մլն. դրամի, 2020թ-ին 391.2 մլն. դրամի և 2021 թ-ի առաջին կիսամյակում կատարվել է 300.0 մլն. դրամի շին մոնտաժային աշխատանքներ:

Ջերմուկի քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվառուղու և սանհանգույցների կառուցման համար նախատեսվել է 215.4 մլն. դրամ, որից 53.8 մլն. դրամի աշխատանքները կատարվել է 2020 թվականին, շարունակությունը կատարվել և ավարտվել է 2021թ-ի առաջին կիսամյակում:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվում է փոքրաքանակ երեխաներով համալրված տիպային (մոդուլային) դպրոցի կառուցում Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրում 706 մլն. դրամ նախահաշվային արժեքով: 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կատարված են հողային և հիմքերի բետոնային աշխատանքները: Չիվա և Գոմք բնակավայրերում նույն ծրագրի շրջանակներում տիպային դպրոցների կառուցման մրցույթները կայացել են, գործընթացը պայմանագրերի կնքման փուլում է:

## Ճանապարհաշինության ոլորտ

2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման ծրագրի շրջանակներում կատարվել են 149.7 մլն. դրամ արժողությամբ 239 կմ ճանապարհների ձմեռային և 167 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ, իսկ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա նույն ծրագրի շրջանակներում կատարվել են 61.9 մլն. դրամ արժողությամբ 147.8 կմ ձմեռային և 76 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ:

2021 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետությունից միջոցներով նախատեսվել են իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Մ2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ98.0-կմ101.4 ձգվող ընդամենը՝ 3.4կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ- 600 մլն. Դրամ արժողությամբ: Առաջին կիսամյակի ընթացքում մրցույթը կայացել է:
2. Մ2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ108.4 - կմ126.1 ձգվող ընդամենը՝ 17.7կմ հատվածի հիմնանորոգում - 3 մլրդ Դրամ արժողությամբ: Կիսամյակի ընթացքում իրականացվել են եզրաքարերի տեղադրման, մայրերի կառուցման, կամուրջների նորոգման և հողային աշխատանքներ:
3. Մ2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ150.7 – կմ 167.6 ձգվող ընդամենը՝ 16.9կմ հատվածի հիմնանորոգում - 2 մլրդ 897 մլն արժողությամբ: Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական, ջրահեռացման խողովակների տեղադրման, կամուրջների նորոգման և հողային աշխատանքներ:
4. Մ10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ120 - կմ124 ձգվող հատվածներում հողային պաստառի փլուզված հատվածների պաշտպանիչ հենապատերի և կառուցվածքների վերականգնում -58.8 մլն. Դրամ արժողությամբ (մրցույթը կայացել է):
5. Մ10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 123+500մ հատվածում վերգետնյա անցման կառուցում՝ 30.0 մլն. դրամ արժողությամբ (կիսամյակի ընթացքում իրականացվել է փորձաքննության փուլը):

Համաշխարհային բանկի միջոցներով նախատեսվել է իրականացնել Հերմոն-Վարդահովիտ 6.2 կմ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ-7մլրդ դրամ արժողությամբ (նախագիծը պատրաստ է և գտնվում է քննարկման փուլում):

## **Ճարտարապետության բնագավառ**

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում մարզպետարանում ուսումնասիրվել և լիազոր մարմին է ուղարկվել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտիներում նախագծման թույլտվություն պահանջող համայնքի ղեկավարների կողմից ներկայացված քաղաքաշինական փաստաթղթերի 3 փաթեթ: Ուսումնասիրման փուլում 2 փաթեթ մերժվել և ուղարկվել է լրամշակման:

Կատարվել է բնակավայրերում հողի նպատակային նշանակության փոփոխության աշխատանքներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրվել է թվով 2 դրական եզրակացություն: Համայնքներից ստացվել է 5 հողամասի գործառնական նշանակության փոփոխության առաջարկներ՝ համաձայնություն է տրվել 3-ին: Համայնքներից ստացվել է 30 շինթույլտվության նախագիծ, որոնց վերաբերյալ ամսական կտրվածքով հաշվետվություն է ներկայացվել ՀՀ ՏԿԵՆ:

ՀՀ կառավարության 31.01.2019թ. թիվ 76-Ա որոշման համաձայն իրականացվել է պետական բյուջեի միջոցներով ստեղծված գույքը համապատասխան համայնքներին նվիրաբերելու գործընթացը, իսկ խաղահրապարակների շարժական գույքը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ՝ հանձնման-ընդունման ակտով, հանձնվել է համապատասխան համայնքին:

## **Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ**

Վայոց ձորի մարզում ազգաբնակչությունն ապահովված է շուրջօրյա խմելու ջրով: Միայն Եղեգնաձոր համայնքի որոշ թաղամասեր խմելու ջուր ստանում են ժամային գրաֆիկով:

<Վեռլիա Ջուր> ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, Մակիշկա համայնքների և Գետափ, Շատին բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը: Նշված ՓԲԸ-ի բաժանորդների թիվը 10.200 է, որից՝ 725-ը իրավաբանական կազմակերպություններ:

Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից: Առաջարկվել է համայնքի ղեկավարներին անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար ջրամատակարարման համակարգերում արձանագրված թերությունները շտկելու ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ: Արդյունքում 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզում խմելու ջրի հետ կապված բռնկումներ չեն արձանագրվել:

## **Գազաֆիկացում**

Վայոց ձորի մարզի 8 համայնքների 44 բնակավայրերից գազաֆիկացված է 17-ը: Այս պահին բնագավառի առաջնահերթությունը մնացյալ բնակավայրերի գազաֆիկացումն է:



Աշխատանքներ են տարվում ազգաբնակչության հետ նաև այլընտրանքային էներգետիկ համակարգերից օգտվելու ուղղությամբ:

### **Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներ**

Մարզում գործում է 48 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում 2 առանձնացված ավագ դպրոց Եղեգնաձոր, Վայք քաղաքներում և 1 կրթահամալիր Ջերմուկ քաղաքում՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ: Նշված դպրոցներում սովորում է 802 աշակերտ:

Մարզային ենթակայությամբ գործում է 45 դպրոց, որոնցից 31-ը՝ միջնակարգ են, 14-ը՝ հիմնական: Դպրոցներից 12-ը գտնվում են լեռնային բնակավայրերում, 6-ը՝ բարձր լեռնային, 5-ը՝ սահմանամերձ:

Մարզային ենթակայությամբ գործող 45 դպրոցներում սովորում է 6110 աշակերտ, աշխատում են 936 ուսուցիչներ: Ուսուցիչների շուրջ 90%-ը (842 ուսուցիչ) ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:

Մարզի 45 դպրոցներից 13-ում սովորում են մինչև 30 աշակերտներ: 9 դպրոցում իրականացվում է ներառական կրթություն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 126 աշակերտի ընդգրկվածությամբ:

Ուսուցիչ / աշակերտ հարաբերակցությունը 1:6 է:

Դասարանի միջին խտությունը կազմում է 13 աշակերտ:

Մարզային ենթակայությամբ դպրոցներում գործում են 17 նախակրթարաններ, որոնցում ընդգրկված է 196 երեխա:

Համայնքային ենթակայությամբ գործում է 16 մանկապարտեզ՝ 1248 երեխայի ընդգրկվածությամբ:

Մարզում գործող 48 (3-ը ՀՀ ԿԳՄՄՆ ենթակայությամբ) դպրոցներից 17-ը ջեռուցվում է գազի լոկալ կաթսայատան միջոցով, 1-ը՝ Խաչիկի միջնակարգ դպրոցը, ջեռուցվում է կոշտ վառելիքով աշխատող լոկալ կաթսայատան միջոցով, մնացած 30 դպրոցները՝ էլեկտրական ջեռուցիչներով:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Հավաքագրվել և կազմվել է մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտական համակազմի ցանցային տվյալները՝ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ:

Կազմակերպվել, անցկացվել և ամփոփվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: Մարզային փուլին մասնակցել են 9-12-րդ դասարանների 512 աշակերտներ, որոնցից 48-ը իրավունք են ստացել մասնակցելու հանրապետական փուլին.

9-րդ դասարանի հայոց լեզվի կենտրոնացված քննությունը անցկացնելու համար նախապատրաստվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ուղարկվել քննական կենտրոնների տեղաբաշխման հետ կապված առաջարկություններ, ինչպես նաև 9-րդ դասարանի շրջանավարտների անվանացանկը: Այդ նպատակով համագործակցված աշխատանքներ են իրականացվել ՀՀ ԿԳՄՄ նախարարության գնահատման և թեստավորման կենտրոնի հետ:

Կրթության, մշակույթի և սպորտի վարչության անմիջական վերահսկողությամբ ապահովվել է դպրոցներից պահանջվող տվյալների մուտքագրումը ԿՏԱԿ-ի (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն) կողմից ստեղծված կառավարման էլեկտրոնային համակարգ:

Կազմակերպվել և անցկացվել են 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների պետական ավարտական քննությունները:

Շրջանավարտների պետական ավարտական փաստաթղթերի տրամադրման համար կազմվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների ճշտված անվանացանկը: Ստացվել և դպրոցներին է բաշխվել 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների ավարտական փաստաթղթերը (վկայականներ, ատեստատներ):

ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել կորած ավարտական փաստաթղթերի (ատեստատներ, վկայականներ) կրկնօրինակների տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք ստացվել և հանձնվել են դպրոցներին՝ կորցնողին տրամադրելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման նոր կարգի համաձայն կազմակերպվել և անցկացվել է միացյալ և առանձին խորհուրդների ձևավորումը և նրա անվանական կազմը հաստատման է ներկայացվել մարզպետին: Ձևավորվել է 13 միացյալ և 7 առանձին խորհուրդներ: Նրանցում ընդգրկվել են 305 անդամներ:

## **Մշակույթ**

Մարզում գործում են՝

Երկու թանգարաններ՝ <Գլաձորի պատմամշակութային արգելոց թանգարանը> - (ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ) և <Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը>՝ մարզային ենթակայությամբ, երկու պատկերասրահներ՝ Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում, գերատեսչական ենթակայությամբ:

Մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքում գործում է մարզային ենթակայությամբ երաժշտական դպրոց և մշակույթի կենտրոն, համայնքային ենթակայությամբ՝ գեղարվեստի դպրոց և 1000 նստատեղով մեկ ամֆիթատրոն:

Եվս չորս արվեստի դպրոցներ գործում են համայնքային ենթակայությամբ, մեկը՝ Վայք քաղաքում, երկուսը՝ Ջերմուկում, և մեկ դպրոց Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում:

Գործող երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում սովորում է 862 երեխա, իսկ դասավանդողների թիվը 96 է:

Վայք և Եղեգնաձոր քաղաքներում գործում են նաև մանկական ստեղծագործական կենտրոններ (ՄՄԿ-ներ): Մարզում առկա է համայնքային ենթակայությամբ գործող 30 մշակույթի տուն:

## **Գրադարաններ**

Վայոց ձորում գործում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ մեկ մարզային գրադարան՝ մարզկենտրոն Եղեգնաձորում, իսկ համայնքային ենթակայությամբ գործում է 36 -ը:

Կազմակերպվել են մի շարք մշակութային միջոցառումներ՝ արվեստի դպրոցների տարեվերջյան հաշվետու համերգներ, կատարողական արվեստի մարզային փառատոն-մրցույթներ: Հանդիսավորությամբ նշվել են պետական տոները և հայ կոմպոզիտորների հոբելյանական տարեդարձերը:

## **Սպորտ**

Մարզում գործում է 4 մարզադպրոց՝ Եղեգնաձորի, Վայքի, Մալիշկայի մարզադպրոցները և Ջերմուկի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոնը՝ ընհանուր 376 երեխաների ընդգրկվածությամբ: Մարզադպրոցներում գործում են ֆուտբոլի, վոլեյբոլի, ըմբշամարտի, բռնցքամարտի, քիթ բոքսինգի և շախմատի խմբակներ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել և անցկացվել են մի շարք մարզական միջոցառումներ, այդ թվում մասնակցություն է ապահովվել մարտի 22-ից 25-ը հրաձգության հանրապետական մրցույթին, 3 պատանեկան թիմերով նաև ՀՖՖ-ի կողմից կազմակերպված Հայաստանի առաջնությանը:

Անցկացվել է ֆուտբոլի մրցաշար մարզի աղջիկների 10 թիմերի մասնակցությամբ: Կազմակերպվել են նաև ֆուտբոլի, շախմատի, բռնցքամարտի և վոլեյբոլի հուշամրցաշարեր:

## **Առողջապահության ոլորտ**

Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար 2021 թվականին հատկացվել է 714.7 մլն. դրամ գումար:

Իրականացվել է 50727.3 հազ. (50 մլն 727 հազ) դրամի վճարովի ծառայություններ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 6.967.1 հազ. (6 մլն 967 հազ) դրամով:

2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշվառվել է 131 ծնունդ, որից 2-ը Արցախի Հանրապետությունից:

Պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 61 տեղից ուղեգրող հանձնաժողովների կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման է ուղեգրվել 32 քաղաքացի, իսկ 8 երեխա (խնամակալների հետ) ուղեգրվել է առողջարանային վերականգնողական բուժման:

Առողջապահական կազմակերպություններում ընդգրկված է 411 բուժաշխատող:

Եղեգնաձորի բժշկական կենտրոնում վերանորոգվել է ռենտգեն կաբինետ և ՅՈՒՆԻՍԵՖ կազմակերպության աջակցությամբ ձեռք է բերվել ռենտգեն նոր ապարատ: Նույն կենտրոնում հունվար ամսից իր աշխատանքն է սկսել <Հայկական ակնաբուժության նախագիծ> բարեգործական հիմնադրամի կողմից հիմնած տարածաշրջանային ակնաբուժական ծառայությունը՝ Վահագն Ազլամիշյանի անվան մարզային ակնաբուժական կենտրոնը:

Ապրիլ ամսվանից մարզում իրականացվում է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը: Հանրային իրազեկման աշխատանքները լիարժեք կազմակերպելու և իրականացնելու նպատակով ստեղծվել է մարզպետին կից հանձնաժողով:

### **Սոցիալական ապահովության բնագավառ**

Հետպատերազմյան իրավիճակում սոցիալական ապահովության ոլորտի նպատակն է եղել պատերազմի հետևանքով մարզի տարածքում առաջացած առաջնային խնդիրների լուծումը: Հունիսի 30-ի դրությամբ ՀՀ պաշտպանության նախարարություն է ներկայացվել 113 զոհված զինծառայողների գործեր:

<Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը> հատուցում է տրամադրել 100 ընտանիքների, 3 գործեր ընթացքի մեջ են: Աշխատանքները կազմակերպվել են այնպես, որ զոհված զինծառայողների ընտանիքները զերծ մնան փաստաթղթերի համար տարբեր կառույցներ այցելից՝ գործերը կազմելու համար սոցիալական աշխատողներն իրենք են այցելել ընտանիքներ:

Հաշվետու ժամանակահատվածում ունեցել ենք անհայտ կորած 14 զինծառայող: <Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի> <Կամուրջ> ծրագրով անհայտ կորած զինծառայողների ընտանիքները ստանում են նախատեսված ամսական հատուցումները: Նշված ընտանիքներին տրամադրվել է խորհրդատվություն դատական կարգով անհայտ բացակայողի կարգավիճակ ձեռքբերելու վերաբերյալ: Դատարանի վճռով 1 անհայտ բացակայող ճանաչվածի գործ ներկայացվել է ՀՀ պաշտպանության նախարարություն:

Սոցիալական աշխատողների կողմից այցելություններ են կազմակերպվել զոհված և անհայտ կորած զինծառայողների ընտանիքներ՝ գորակցության և անհրաժեշտության դեպքում օգնելու նպատակով: Կարիքավոր ընտանիքներին մարզպետարանի կողմից տրամադրվել է ֆինանսական աջակցություն:

Մարզային իշխանությունների հոգածության ներքո են նաև հաշմանդամ դարձած զինծառայողները: Աշխատանքներ են տարվել ՀՀ պաշտպանության նախարարություն և <Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ> գործերը ներկայացնելու ուղղությամբ:

Զինհաշմանդամները իրազեկվել են իրենց իրավունքների մասին և արդեն 36 գործ ներկայացվել է ՀՀ ՊՆ: 2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում 30 զինհաշմանդամներ ստացել են

փոխհատուցումներ: Պրոթեզավորման կարիք ունեցող զինծառայողների համաձայնագրերը ներկայացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով շարունակվում է բնակարանի կարիքավոր զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների հաշվառումը: 2021 թվականին ՀՀ պաշտպանության նախարարություն է ներկայացվել 2 զոհված զինծառայողների և առաջին խմբի զինհաշմանդամի բնակարանային ապահովման գործեր:

Կազմակերպվել է 2020թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունից տեղահանված և ՀՀ Վայոց ձորի մարզում հանգրվանած ընտանիքներին բնակարանով, հագուստով, պարենային, տնտեսական, հիգիենիկ և անհրաժեշտ պարագաներով ապահովելու գործընթացը:

Արցախի չվերադարձած ընտանիքների շրջանում իրազեկման աշխատանքներ են տարվել ՀՀ կառավարության աջակցության ծրագրերի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում տրամադրվել է խորհրդատվություն:

Համակարգիչ չունեցող ընտանիքներին էլեկտրոնային դիմումները լրացնելու հարցում օգնել են համայնքապետարանների սոցիալական աշխատողները:

Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման նպատակով Վայոց ձորի մարզում իրականացվել է <Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման> 10 ծրագիր:

Հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական խնդիրները ևս մարզպետարանի ուշադրության կենտրոնում են: Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից տնային պայմաններում ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայություններ է մատուցում 100 տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց:

Մարզում ստեղծվել են միասնական սոցիալական ծառայության 3 կենտրոններ, որոնց միջոցով քաղաքացիները մեկ պատուհանի սկզբունքով կարող են օգտվել սոցիալական ապահովության, զբաղվածության, բժշկասոցիալական փորձաքննության և սոցիալական աջակցության ոլորտներին առնչվող ծառայություններից:

**Զարգացման ծրագրեր և զբոսաշրջության ոլորտ**

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 2020 թվականի տարեկան գործունեության ծրագրի մշտադիտարկման, մարզի փոքր և միջին ձեռնարկությունների մասին տեղեկատվության ստացման և վերլուծության աշխատանքներ:

Կատարվել են մարզի փոքր և միջին ձեռնարկատիրության ծրագրերի առաջնահերթությունների և գերակայությունների որոշման ու զարգացման ծրագրերի քննարկման աշխատանքներ: Ապահովվել է փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտով զբաղվող նախարարությունների, գերատեսչությունների, մարզային կառույցների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը:

Կազմակերպվել է մարզի ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, ծրագրերի նախագծերի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի, գեկուցման նյութերի հավաքագրման, պատրաստման աշխատանքները:

Կազմակերպել և իրականացրել է տնտեսական վիճակի վերլուծություն, ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերլուծության աշխատանքներ:

Իրականացրել է տարեկան և կիսամյակային հաշվետվությունների կազմում և վերլուծություն:

Մարզի համայնքներից հավաքագրվել և կազմվել է Հայաստանի Հանրապետության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի, Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերի փաթեթները, վերջիններս ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ քննարկման:

2021 թվականի համար հաստատվել է 38 սուբվենցիոն ծրագիր՝ 2 մլրդ. 126,3 մլն ՀՀ դրամ արժողությամբ, որից 978,6 մլն. ՀՀ դրամը կամ 46,02 %-ը համայնքների ներդրումն է, 1 մլրդ. 141,4 մլն ՀՀ դրամը կամ 53,68 %-ը՝ սուբվենցիայի գումարն է, իսկ 6,3 մլն ՀՀ դրամը կամ 0,3 %-ը՝ մասնավոր ներդրումն է:

Սուբվենցիոն 14 ծրագրերի իրականացման համար հայտարարված մրցույթներն 2021 թվականի առաջին կիսամյակում արդեն կայացել են, որոնցից 6 ծրագրի իրականացման շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են:

Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման նպատակով ապահովվովվել է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ ու արդյունավետ համագործակցությունը, որն էլ նպաստել է զբոսաշրջիկների թվի աճին:

Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով մշակվել են ներդրումային ծրագրեր, օրինակ՝ Նորավանքի կիրճի, Արենի գյուղի և Մոզրովի քարանձավի ներդրումային ծրագրերը, և ներկայացվել ՀՀ կառավարություն:

Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվել են Վայոց ձորի տուրիստական այլընտրանքային եղանակների զարգացմանն ուղղվածությունները, հեռանկարները և

իրականացման ռազմավարությունը: Ինչպես նաև պարբերաբար մշակվել են հյուրասանների զարգացման ծրագրեր:

Ընթացիկ աշխատանքներ են կատարվել և կատարվում՝ Երևան–Մեղրի ճանապարհից հեռու գտնվող զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմամշակութային հուշարձանների ենթակառուցվածքները զարգացնելու, ինչպես նաև նրանց մասին համարժեք տեղեկատվության տարածումն ապահովելու ուղղությամբ՝ նպաստելով նաև էկոտուրիզմի, բնական տուրիզմի, արկածային տուրիզմի, գաստրոտուրիզմի, գիտական տուրիզմի, անձավագիտական տուրերի, լեռնային և հետիոտն երթերի, ժայռամագլցման, ձկնորսության, պատմամշակութային տուրիզմի զարգացմանը:

Աշխատանքներ են կատարվել մարզի մոտ 1400 պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի, բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, էկոլոգիայես մաքուր մթերքների արտադրության, առողջարանների և հանգստյան գոտիների ճանաչվածությունը և ձմեռային զբոսաշրջության համար նրանց կարողությունները պատշաճ ներկայացնելու ուղղությամբ՝ դրանով իսկ մարզը դարձնելով զբոսաշրջության համար գրավիչ և նպաստավոր տարվա 4 եղանակների համար:

Արտաքին կապերի զարգացման, մարզի տնտեսվարող սուբյեկտներին աջակցության ցուցաբերման նպատակով, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ գործնական փոխշահավետ կապերի ստեղծման ուղղությամբ տնտեսվարող սուբյեկտների համար իրականացվել համագործակցության ընդլայնման լայնածավալ աշխատանքներ:

Մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը հետևյալ պետությունների հետ.

- Իրանի Իսլամական Հանրապետություն՝ Արևմտյան Ատրպատական նահանգի Խոյ Կուսակալություն,
- Ռուսաստանի Դաշնություն, Նիժեգորոդի և Արխանգելսկի նահանգներ,
- Բելառուսի Հանրապետություն (Մինսկի մարզ):

2021թ. հունիսի 30-ին կնքվել է համագործակցության հուշագիր ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և Երևանում Դոմ Մոսկվի մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի միջև:

Աշխատանքներ են կատարվել.

- հայ-լեհական, հայ-բելառուսական,
- հայ- չինական, հայ-բուլղարական,
- հայ-ուկրաինական, հայ-լատվիական տնտեսական համագործակցության

արձանագրությունների կետերի կատարման ուղղությամբ, որոնց շրջանակներում մասնակցություն է ապահովվել միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված առցանց սեմինարների, հանդիպումների, քննարկումների և դասընթացների:

## **Հողօգտագործման ոլորտ**

2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացում, ինչպես նաև 2018, 2019 և 2020 թվականներին, հետևողական աշխատանքներ են տարվել, որպեսզի համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալության տրամադրման գործընթացներն իրականացվեն ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

2021 թվականի հունիսի 31-ի դրությամբ մարզի համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օտարվել է 63.198 հա հողատարածք, 53.5 մլն դրամ գումարով, իսկ վարձակալական հիմունքներով օգտագործման է տրամադրվել 6.3 հա, որի համար կնքվել է 13 վարձակալական պայմանագիր:

## **Տեղական ինքնակառավարման բնագավառ**

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառավարման համակարգի մարմինների հետ:

Հետևողական միջոցներ են ձեռնարկվել մարզի համայնքների 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանների հաստատման ուղղությամբ:

Համակարգվել է մարզի տեղական ինքնակառավարման (ՏԻ) մարմինների կողմից ընդունված, սակայն ՀՀ Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող որոշումները՝ մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ:

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պատշաճ կարգով համակարգվել է համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության իրավահարաբերություններին վերաբերող գործընթացը:

2021 թվականի ապրիլի 12-ից 23-ը իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքում:

Համագործակցելով մարզի համայնքապետարանների աշխատակազմերի հետ՝ գույքագրվել են համայնքներում առկա հիմնախնդիրները: Համայնքների և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տրվել են դրանց լուծման նախնական հնարավոր գնահատականները:

Հաշվետու ժամանակաշրջանում պատշաճ աշխատանքներ են իրականացվել 2021 թվականի հունիսի 20-ին կայացած ԱԺ արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի՝ մարզպետին և համայնքների ղեկավարներին վերաբերող կետերի պահանջների կատարման ուղղությամբ:



2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում աշխատանքային պլաններին համաձայն և ըստ անհրաժեշտության առողջ համագործակցություն է ապահովել պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ:

### **Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ**

2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցների կողմից այցելություններ են իրականացվել մարզի համայնքների Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված, անհայտ կորած և վիրավորում ստացած զինծառայողների, սոցիալապես անապահով, բազմազավակ և բազմանդամ ընտանիքներ՝ կարիքի գնահատման, սոցիալական և հոգեբանական աջակցություն ցուցաբերելու նպատակով, միաժամանակ տրամադրելով սոցիալական աջակցության ծանրոցներ:

Աշխատանք է կատարվել՝ ընտանիքներում առկա տարաձայնությունների լուծման, հաշտության վերականգնման, ծնողական իրավունքի իրականացման ուղղությամբ:

Քննարկվել են իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրները, պաշտպանվել են նրանց իրավունքներն ու շահերը: Առաջին կիսամյակում հաշվառված է եղել իրավախախտ 7 անչափահաս և ընտանեկան բռնության դեպքով չափահաս 15 քաղաքացի:

<<Մանուկ>> տեղեկատվական համակարգ է ներմուծվել դժվար իրավիճակում հայտնված 112 երեխայի վերաբերյալ տեղեկություն, կատարվել է համակարգից երեխաների դուրսգրում՝ 18 տարին լրանալու կապակցությամբ:

Որդեգրելու ցանկություն հայտնած և մարզպետարան դիմած երկու ընտանիք՝ Եղեգնաձոր և Ջերմուկ համայնքներից, իրազեկվել են որդեգրման ընթացակարգին, ընթացքի մեջ են նրանց փաստաթղթային փաթեթների պատրաստման աշխատանքերը:

2021 թվականին տարածքային և կենտրոնացված հաշվառման է վերցվել առանց ծնողական խնամքի մնացած 4 երեխա՝ Ջերմուկ համայնքից, 1 երեխա՝ Եղեգնաձոր համայնքից: Նրանց նկատմամբ սահմանվել է խնամակալություն: Նույն կարգավիճակով 4 երեխա դուրս է եկել կենտրոնացված հաշվառումից՝ կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորվելու հիմքով:

Բժշկա-հոգեբանամանկավարժական կենտրոնի գնահատման արդյունքների եզրակացության հիման վրա 6 ամսում վկայագրվել են 18 երեխայի կրթության առաձնահատուկ պայմանների կարիքները՝

6 երեխայի՝ Եղեգնաձորի №2, 3 երեխայի՝ Եղեգնաձորի №1, 3 երեխայի՝ Ջերմուկի №3 հիմնական դպրոցներում, 5 երեխայի՝ Շատինի և 1 երեխայի՝ Քարազլիսի միջնակարգ դպրոցներում:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են Արցախից տեղահանված քաղաքացիների հաշվառման աշխատանքներ: 22 ընտանիքի վերաբերյալ տեղեկություններ են մուտքագրվել ՀՀ միգրացիոն ծառայության էլեկտրոնային համակարգ:

Ապահովվել է մարզպետարանի նշված բաժնի մասնագետների մասնակցությունը անչափահասների նկատմամբ կատարվող քննչական 4 գործողությունների:

Միջգերատեսչական համագործակցության խմբի հետ համատեղ քայլեր են ձեռնարկվել Հերմոն և Եղեգիս բնակավայրերի 2 ընտանիքներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 2 չափահասների և 2 անչափահաս երեխաների խնամքը մասնագիտացված հատուկ հաստատությունում իրականացնելու ուղղությամբ:

Մարզպետարանի աջակցությամբ, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և Հայաստանի Հանրապետությունում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանատան նախաձեռնությամբ, մարզում իրականացվել են հումանիտար մի շարք ծրագրեր, որոնց շրջանակներում սոցիալապես անապահով, ինչպես նաև Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված, վիրավորում ստացած և անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին տրամադրվել են սննդի, հիգիենայի պարագաների և ծածկոցների փաթեթներ: Մարզի կարիքավոր ընտանիքների համար պատրաստվել և բաշխվել է իրանահայ համայնքի տրամադրած սննդի աջացության ծանրոցներ:

## **Իրավական ոլորտ**

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժինը 2021թ. 1-ին կիսամյակի ընթացքում ապահովել է ՀՀ օրենսդրությամբ մարզպետին և գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունների օրինականությունը, ուսումնասիրել է մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված՝ Մարզպետի և Գլխավոր քարտուղարի ընդունած իրավական ակտերի նախագծերի համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրությանը:

Ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ մարզպետի գրությամբ համապատասխան առաջարկություններ է ներկայացվել համայնքների ղեկավարներին:

Ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկվել համապատասխան միջոցառումներ և առաջարկություններ են ներկայացվել Մարզպետին:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել է քաղաքացիների դիմումներ, ինչպես թղթային տարբերակով, այնպես էլ առցանց և ՀՀ վարչապետի աշխատակազմից կամ ՀՀ ՏԿԵ նախարարությունից վերամակագրված:

## **Դիմումներում բարձրացված հարցերը վերաբերել են՝**

- անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցմանը,
- աշխատանքային իրավունքների իրացմանը,
- բնակարանի վթարայնության հետ կապված, պետական մարմինների հետ ունեցած խնդիրներին,
- իրավական ակտերի չիմացության հետևանքով հանդիպած տարաձայնություններին,
- հողային (հարևանային իրավունքի) հարաբերությունների հետ կապված խնդիրներին,
- գույքին պատճառված վնասի փոխհատուցմանը,
- բնակավայրի՝ էլ. էներգիայի անջատումներից կրած նյութական վնասներին և նմանատիպ այլ հարցերին: Դիմումներին պատասխանվել է էլեկտրոնային օրենսդրության պահանջներից:

Իրականացվել է քաղաքացիների և պաշտոնատար անձանց ընդունելություն, տրամադրվել անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն և համապատասխան տեղեկատվություն ինչպես քաղաքացիներին, այնպես էլ համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցներին:

Մարզպետարանի ստորաբաժանումների աշխատակիցներին տրվել են պարզաբանումներ՝ ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ, տրամադրվել են մեթոդական ցուցումներ:

Պատասխանվել են մի շարք լրատվական կայքերի լրագրողների և հասարակական կազմակերպությունների հարցումների:

Կազմակերպվել է մարզպետարանում քննարկվող տարաբնույթ հիմնախնդիրների իրավական լուծում տալու գործընթաց:

Ուսումնասիրվել են ՀՀ օրենքների և կառավարության որոշումների նախագծեր, դրանց վերաբերյալ ներկայացվել են մի շարք առաջարկություններ:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ամենամյա տեղեկատվություն է ներկայացվել մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

## **ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման կիսամյակային արդյունքները**

2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ մարզի 8 համայնքների տեղական բյուջեներով ընդամենը տարեկան եկամուտներ են նախատեսվել 3 009 985 600 /երեք միլիարդ ինը միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, վեց ամսվա համար նախատեսվել է 1 387 159 100/ մեկ միլիարդ երեք հարյուր ութսուկոտ հազար հարյուր հիսունինը հազար հարյուր/ ՀՀ դրամ,

տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից հավաքագրվել է 1 332 014 800 /մեկ միլիարդ երեք հարյուր երեսուներկու միլիոն տասնչորս հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 96.0%-ով, աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմում է 24.7%, որից

սեփական եկամուտներ՝ վեց ամսվա համար նախատեսվել է 502 110 000 /հինգ հարյուր երկու միլիոն հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 441 081 500 /չորս հարյուր քառասունմեկ միլիոն ութսունմեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ կամ կատարվել է 87.8%-ով, աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմում է 5.2% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 21 706 500/քսանմեկ միլիոն յոթ հարյուր վեց հազար հինգ հարյուր/ՀՀ դրամ:

#### Այդ թվում՝

- Հողի հարկ՝ 35 700 100/երեսուներկու միլիոն յոթ հարյուր հազար հարյուր/ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 23 728 400 /քսաներեք միլիոն յոթ հարյուր քսանութ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ կամ կատարվել է 66.5%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 5.5% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 1 241 200 /մեկ միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:
- Գույքահարկ /շենք շինությունների և փոխադրամիջոցների համար/՝ 134 911 900 /մեկ հարյուր երսունչորս միլիոն ինը հարյուր տասնմեկ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 106 015 900 / հարյուր վեց միլիոն տասնհինգ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ, կատարվել է 78.6%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 15.5% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 14 233 600 /տասնչորս միլիոն երկու հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:
- Տեղական տուրքեր՝ 13 616 200/տասներեք միլիոն վեց հարյուր տասնվեց հազար երկու հարյուր/ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 11 865 700/տասնմեկ միլիոն ութ հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ, կատարվել է 87.1%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 15.7% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 1 611 000 /մեկ միլիոն վեց հարյուր տասնմեկ հազար/ ՀՀ դրամ:
- Գույքի վարձակալություն՝ 201 225 400 /երկու հարյուր մեկ միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 198 202 900 / հարյուր իննսուներեք միլիոն երկու հարյուր երկու հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ, կատարվել է 98.5%-ով:
- Տեղական վճարներ՝ նախատեսվել է 84 457 300 /ութսունչորս միլիոն չորս հարյուր հիսունյոթ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 63 382 700 /վաթսուներեք միլիոն երեք հարյուր ութսուներկու հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ, կատարվել է 75.0 %-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 57.0% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 23 003 700 /քսաներեք միլիոն երեք հարյուր յոթ հարյուր/ ՀՀ դրամ , այդ թվում

- Աղբահանության վճար՝ նախատեսվել է 35 260 600/ երեսունհինգ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 22 152 300/ քսաներկու միլիոն մեկ հարյուր հիսուն երկու հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ կամ կատարվել է 62.8%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 15.6% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 2 996 900 /երկու միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ: Համահարթեցման կարգով ՀՀ 2021թ. պետական բյուջեից մարզի համայնքներին առաջին կիսամյակի համար նախատեսվել է

- 792 035 200 (յոթ հարյուր իննսուներկու միլիոն երեսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

2021 թվականի առաջին կիսամյակին ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին <ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին> ՀՀ օրենքով հատկացված Ֆինանսական միջոցների մասին տեղեկություններ

- <ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին> ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետարանին ծրագրերի և միջոցառումների իրականացման համար 2021թ.-ի առաջին կիսամյակում նախատեսվել են ծախսեր՝
- 1 809 119 900 (մեկ միլիարդ ութ հարյուր ինը միլիոն հարյուր տասնինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով,
- փաստացի ֆինանսավորվել է 1 435 037 900 (մեկ միլիարդ չորս հարյուր երեսունհինգ միլիոն երեսուկոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 79.3%-ով, որից.

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պահպանման համար 2021 թվականի առաջին կիսամյակում նախատեսվել է ընթացիկ ծախսեր՝

- 185 270 000 (հարյուր ութսունհինգ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով,
- փաստացի ֆինանսավորվել է 179 141 500 ( հարյուր յոթանասունինը միլիոն հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 96.7 %-ով:

Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին՝ 2021թ.-ի առաջին կիսամյակի համար պետական բյուջեով նախատեսվել է՝

- 32 818 300 (երեսուներկու միլիոն ութ հարյուր տասնութ հազար երեք հարյուր)ՀՀ դրամ գումար,
- փաստացի ֆինանսավորվել է 32 818 200 (երեսուներկու միլիոն ութ հարյուր տասնութ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Մշակույթի ոլորտի համար նախատեսվել է՝

- 8 715 900 (ութ միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր ) ՀՀ դրամ գումար, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Կրթության ոլորտի ծախսեր նախատեսվել է՝

- 1 143 498 100 (մեկ միլիարդ մեկ հարյուր քառասուններեք միլիոն չորս հարյուր իննսունութ հազար մեկ հարյուր)ՀՀ դրամ գումար,
- փաստացի ֆինանսավորվել է 1 018 727 600 (մեկ միլիարդ տասնութ միլիոն յոթ հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր)ՀՀ դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել 89.1%-ով: Էջ 22

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ նորոգում ծրագրով նախատեսվել է՝

- 62 424 000 (վաթսուներկու միլիոն չերս հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ գումար,
- փաստացի ֆինանսավորվել է 61 300 000 (վաթսունմեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 98.2%-ով:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում ծրագրով նախատեսվել է

- 33 300 000 (երեսուներեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումար, փաստացի ֆինանսավորվել է 22
- 30 782 200 (երեսուն միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր)ՀՀ դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 92.4%-ով:

ՀՀ կառավարության 2021 թվականի թվով 5 որոշումներով ՀՀ Վայոց ձորի մարզին հատկացվել է

- 342 913 600 (երեք հարյուր քառասուներկու միլիոն ինը հարյուր տասներեք հազար վեց հարյուր )ՀՀ դրամ գումար, որից
- փաստացի ֆինանսավորվել է 103 372 500 (մեկ հարյուր երեք միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, այդ թվում սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար հատկացվել է
- 222 793 600 (երկու հարյուր քսաներկու միլիոն յոթ հարյուր իննսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, որից
- փաստացի ֆինանսավորվել է
- 74 252 500 (յոթանասունչորս միլիոն երկու հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր)ՀՀ դրամ գումար, ֆինանսավորումը կատարվել է 33.3%-ով, թերի ֆինանսավորումը կազմում է

- 148 541 100 (մեկ հարյուր քառասունուր միլիոն հինգ հարյուր քառասունմեկ հազար մեկ հարյուր) - ՀՀ դրամ գումար, որը պայմանավորված է սուբվենցիոն ծրագրերի փաստացի կատարման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի բացակայության հետ:

Տեղեկացնեմ, որ կիսամյակի ընթացքում կազմել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել մարզի զարգացման 2022-2024 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերը:

### **ՀՀ Վայոց ձորի ուղղված հարումներ**

2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում զանգվածային լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից և ֆիզիկական անձանց կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին է հասցեագրվել 13 հարցում, որոնց պատասխան է տրվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: